ԼԺԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԿԱՆՈՆՆԵՐ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

371
1-21

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ԵԵՐԵՎԱՆ—1933

17 MAY 2013

7 MAR 2010

ԼԱԿ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

371
4-21 ար.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

840
37
Ա 953

ՀԱՍՀ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐԱՆՈՒՄԻ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—ССРА
им. А. Мясникяна

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՑԵՐԵՎԱՆ—1933

ԲՈԼՈՐ ԼՈՒՍԲԱԺԻՆՆԵՐԻՆ

Անցյալ տարի աշնանը «Կուլտֆրոնտ» №29-ում տպագրվեց մասնայական դպրոցների ներքին կյանքի կարգավորման վերաբերյալ կանոնները և հրահանգվեց լուսբաժիններին գործադրել դպրոցներում: Սակայն հետագայում պարզվեց, որ այդ կանոնները չեն գործադրվում ճշտությամբ և շարունակվում են դիսցիպլինայի և ռեժիմի խախտումները: Անհանդուրժելի համարելով այս դրությունը, որով վտանգվում է կոմդաստիարակության և ուսման ամբողջ գործը, վերահրատարակում ենք դպրոցական ներքին ռեժիմի կանոնները և առաջարկում լուսբաժիններին հետևել դրանց անթերի կատարմանը:

Լ.Ժ.Կ տեղակալ և դպրոցական սեկտորի վարիչ՝ Ս. ԴԱՎԹՅԱՆ

Գեղարքունի Տպարան

Գրաքննիչ 8762 Գրաքննիչ 2067. Տիրաժ 1200.

ԿԱՆՈՆՆԵՐ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համկոմկուսի կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի և 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշումների իրագործման եյական նախապայմաններից մեկը հանդիսանում է դպրոցական ռեժիմի կանոնավորումը:

Պետք է նշել, վոր ներկայումս մասսայական դպրոցների ներքին ռեժիմը մի շարք թերությունների պատճառով ցանկալի վիճակում չի գտնվում:

ա) Դպրոցներում բացակայում է ուսումնական աշխատանքի և հանգստի ժամերի նորմալ ու միորինակ բաշխումը:

բ) Ինքնահոսի, անուշադրության են մատնված աշակերտության տանը կատարելիք ուսումնական աշխատանքները:

գ) Չեն կազմակերպված աշակերտությանը և դպրոցին վերաբերող սանիտարական ձեռնարկումները:

դ) Դպրոցներում բացակայում է գիտակցական դիսցիպլինան, թույլ է աշակերտության պատասխանատվության զգացումը դեպի ուսումնական ու հասարակական գրաղմունքները:

ե) Աշակերտության և ուսանողության մեջ բացակայում է սրտացավ վերաբերմունք դեպի դպրոցական ամեն տեսակի գույքը, ընդհակառակը, գոյություն ունի մեծ անտարբերություն դեպի հասարակական այդ գույքի փչանալը, անհետանալը:

զ) Աշակերտության, դասատվական կազմին, վարչության և մյուս պաշտոնյաների անելիքն ու պարտականությունները դպրոցի ներքին կյանքում միշտ պարզ ու վորոշ չե:

է) Աշակերտության հասարակական աշխատանքները, վորոնք խիստ կարևոր նշանակություն ունեն կոմունիստական դաստիարակության համար, չի կազմակերպված ռացիոնալ ձևով: Աշակերտության և պիոներ կազմակերպության աշխատանքներում չկա հասարակական գործունեության միասնական պլան, վոչ էլ անհրաժեշտ ղեկավարություն, դրա հետևանքով էլ դպրոցականների մի մասը՝ ակտիվը ծանրաբեռնված է հասարակական աշխատանքներով ի վնաս ուսումնական գործի, իսկ մյուս մասը՝ բոլորովին անմասն է այդ աշխատանքից:

ը) Հաշվի չառնելով յերեխաների ուժերն ու կարողությունները տարիքային հնարավորությունների և որյեկտիվ պայմանների տեսակետից, աշխատանքների բաշխումը աշակերտության մեջ նպատակահարմար ձևով չի կատար-

վում կամ յերեխաներին ծանրաբեռնում են այնքան, վոր տուժում է ուսման գործը։

Թ) Շատ դպրոցներում ամիսներ չարունակ դպրոցական կյանքը նորմալ հունի մեջ չի մտնում՝ մնայուն դասացուցակի բացակայության, աշակերտության և ուսուցչության անկանոն հաճախումների, դասագրքերն ու դասական պիտույքները և այլ նյութերն իրենց ժամանակին չստանալու պատճառով։

Նշված թերությունները վերացնելու և ընդհանրապես դպրոցական կյանքը, համաձայն Համկոմկուսի սեպտեմբերի 5-ի և ոգոստոսի 25-ի վորոշումների, կանոնավորելու նպատակով առաջարկվում է ներքևի կանոնները պարտադիր գործադրել։

ԴԱՍԵՐԻ ՅԵՎ ԴԱՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ա աստիճանի, 7-ամյա, 10-ամյա և կոլյերիա դպրոցներում դասերը սկսել հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար, փետրվար և մարտ ամիսներին վոչ շուտ քան առ. ժամը 8 և կեսին և ապրիլ, մայիս, հունիս և սեպտեմբեր ամիսներին՝ վոչ շուտ, քան առ. ժ. 8-ին։

Ծանոթություն.— Տեղական առանձնահատուկ պայմաններից յելնելով, դպրոցական վարչությունները կարող են ժամերի այս կարգում փոփոխություն մտցնել։

2. Ա և Բ խմբերի աշակերտները վեցորյակում պետք է ունենան վոչ ավելի, քան 20, Գ և Դ խմբերին՝ վոչ ավելի, քան 25, իսկ 5—10 խմբերին՝ վոչ ավելի, քան 30 ժամ դրաղմունք, հաշվելով այստեղ ուսումնական հասարակական աշխատանքների բոլոր տեսակները։

3. Դասերի տևողությունը՝ 45-ական բոպե պետք է լինի։

Դասամիջոցների տևողությունը պետք է լինի 10-ական բոպե, իսկ յերրորդ դասից հետո՝ մեծ դասամիջոցին՝ 20 բոպե։

Արգելվում են անընդհատ, անդասամիջոց դրաղմունքները։

4. Ըստ որերի և վեցորյակի, իսկ գյուղերում յոթորյակի, դասերն այնպես բաշխել, որ ինչ խոսքով դասացուցակն այնպես կազմել, վոր հեշտ կամ դժվար դասերի կուտակում չլինի։

5. Մնայուն դասացուցակ կազմել և փակցնել տարեսկզբին և փոփոխության յենթարկել միայն յերկրորդ կիսամյակի սկզբին, յերբ կարող է նոր առարկաներ ավելանալու կամ յեղածներից վորևե մեկը պակասելու հետևանքով այդ փոփոխության կարիքը լինել։

6. Բոլոր խնդիրների համար սահմանել տանը կատարելիք ուսման վերաբերյալ աշխատանքներ այն հաշվով, վոր Ա և Բ խմբերի աշակերտները պարապեն որական 30—40 բոպե,

Գ, Դ խմբերին՝ 1 ժամ, իսկ ավելի բարձր խմբերին՝ 1 և կեսից 2 ժամ:

Հանգստի նախընթաց որերին տանը կատարելու աշխատանքներ չտալ:

7. Դպրոցում յերկու կամ ավելի հերթի աշխատանքներ լինելու դեպքում Ա. և Բ խմբերի աշակերտների պարապմունքները պետք է վերջանան յերեկոյան ժամը 6-ից, Գ և Դ խմբերին՝ 7-ից, իսկ ավելի բարձր խմբերին՝ յերեկոյան ժ. 9-ից վոչ ուշ:

8. Ժամը 9-ից հետո թե առաջին աստիճանի և թե ավելի բարձր խմբերի աշակերտների բոլոր տեսակի կոլեկտիվ պարապմունքները և հավաքույթներն արգելել:

8—13 տարեկան աշակերտներին յերեկոյան ժ. 9-ից և 14—17 տ. աշակերտներին յերեկոյան ժ. 10-ից հետո արգելվում է հաճախել կինո, թատրոն և նման այլ զվարճավայրեր և հանդեսներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

9. Դպրոցի վարչությունը պետք է պայմանավորվի մատակարարման մարմինների հետ՝ կազմակերպելու տաք նախաճաշ ամբողջ աշակերտության համար (մեծ դասամիջոցին):

Ծանոթություն.— Յեթե նախաճաշի համար մեծ դասամիջոցի տևողությունը քիչ է, յերկարացնել:

10. Աշակերտներից պետք է պահանջել առողջապահական մի շարք տարրական կանոնների ամենորյա կատարում—ձեռքերի, յերեսի, մաղերի, զգեստի, կոշիկների մաքրություն, ուտելուց առաջ ձեռքերը լվանալ, ուտելուց հետո բերանը վողողել և այլն:

11. Տեխնիկական աշխատավորները պարտավոր են ամեն որ և ամեն հերթին մաքրել և ողափոխել դպրոցական շենքը, հատկապես դասարանները: Այդ գործի հսկողը հանդիսանում է դպվարը:

12. Դպրոցական բժիշկը պետք է կանոնավոր հետևի դպրոցի սանիտարական վիճակին—շենքին, կահկարասուն, դասարանների և միջանցքների ողափոխության և այլն:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

13. Աշակերտությունը պարտավոր է կանոնավոր հաճախել և ակտիվորեն մասնակցել բոլոր դասերին:

Ուսուցիչները պարտավոր են դասի սկզբին լինել դպրոցում: Նրանց ուշացումների և բացակայությունների հաշվառումը կատարելու յե դպրոցի վարչությունը:

14. Դպրոցի վարիչը և փոխ վարիչը (յեթե կա) պարտավոր են դասերը սկսվելուց 10 րոպե առաջ լինել դպրոցում և ամբողջ աշխատանքների ընթացքում մնալ այնտեղ:

15· Դասն սկսվելուն պես թե աշակերտները և թե ուսուցիչները պետք է շտապեն դասարան և անցնեն գործի: Դասը վերջանալուց հետո աշակերտները պետք է դուրս գան դասարանից, անցնեն բակը՝ խաղալու կամ հանգստանալու թարմ ոդում:

16· Դասամիջոցներին ուսուցիչները վորոշ հերթականության մեջ պետք է լինեն աշակերտության մեջ՝ սերտ կապ ստեղծելու նրանց հետ, կազմակերպելու խաղեր և հսկելու կարգապահության:

17· Յուրաքանչյուր աշակերտ պարտավոր է բարեխղճորեն պատրաստել բոլոր ուսուցիչներից և բոլոր առարկաներից տրված դասերը և առաջադրանքները: Ընտանեկան կամ հասարակական աշխատանքների պատրվակով ուսման գործում թերացումը կամ հետամնացությունը չի կարող անտեսվել:

18· Միանգամայն անհանդուրժելի պետք է համարել դպրոցական դիսցիպլինայի վորևե խախտում, ուսուցչական կազմին և վարչությանը վիրավորանք հասցնելը, խուլիգանական արարքներ—ծեծ, աղմկարարություն, հայհոյանք և այլն:

19· Դիսցիպլինայի ֆոնդրում շատ անգամ փոխանակ դաստիարակչական միջոցների, դործադրվում է վարչարարություն: Դիսցիպլինան վերականգնելու ամենաազդու միջոցը պետք է լինի աշակերտության ներգրավումը զանազան

տեսակի ուսումնական աշխատանքների մեջ դասարանում, արհեստանոցում, լաբորատորիայում, հողամասում, արտադրական ձեռնարկում և այլն:

Բացի այդ՝ պետք է դիմել ծնողների և աշակերտական ու հասարակական զանազան կազմակերպությունների աջակցության: Եթե դաստիարակչական բոլոր միջոցները սպառելով չստացվի դրական արդյունք, այդպիսի դեպքերում միայն դիմել վարչական քայլերի:

20· Դպրոցական դիսցիպլինան գիտակցաբար խախտող աշակերտներին, նայած հանցանքի բնույթին ու չափին, վարչությունը կարող է պատժել, ծայրահեղ դեպքերում նույնիսկ հեռացնել դպրոցից, այդ մասին ստանալով Լուսբաժնի համաձայնությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

21· Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա իր առարկայի տարեկան ծրագրերը և ամենորյա դասերի մեթոդապես մշակված գրավոր պլանը, վորը պետք է պատրաստ ունենալ, հարկ յեղած դեպքում ներկայացնելու դպվարին կամ վերադաս օրգանների ներկայացուցիչներին:

22· Աշակերտությունը պարտավոր է խստորեն հետամտել դպրոցական դույքի, շենքի, կահկարասու, ուսումնական պիտույքների, ար-

հեստանոցի, լաբորատորիայի և այլ դույքի պահպանման:

23· Ուսուցիչները պարտավոր են դասից առաջ հոգալ-պատրաստել իրենց ավանդվելիք նյութի հետ կապված անհրաժեշտ գործիքները, գրքերը, նկարները և այլն: Դասը պետք է բացառապես ոգտագործվի ակադեմիական աշխատանքներով:

24· Ուսուցիչները պետք է լավ ճանաչեն իրենց բոլոր աշակերտներին ըստ աշխատասիրության, ընդունակության, խառնվածքի՝ նրանց նկատմամբ ճկուն վերաբերմունք հանդես բերեն ուսման պրոցեսում:

Պետք է կազմակերպել թույլ աշակերտների ոգնության գործը· դրա համար ուսուցիչը դիմելու յե ծնողներին, աշկաղմակերպություններին կամ նույն խմբի ուժեղ աշակերտներին:

25· Աշակերտների պոլիտեխնիկ բնույթի աշխատանքներն արտադրական հիմնարկում կամ ձեռնարկում, գործարանում, կոլտնտեսության մեջ կազմակերպելիս պետք է հարմարեցնել յերեխաների ֆիզիկական և մտավոր ուժերին ու կարողություններին՝ այն նկատառումով, վոր այդ աշխատանքները տեղի չունենան ի վնաս ուսումնական գործի: Դպրոցի վարիչին է վերապահվում աշակերտության արտադրական աշխատանքների բոլոր հարցերը համաձայնեցնել տվյալ ձեռնարկի վարչության հետ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

26· Ցուրաքանչյուր աշակերտ կարող է ունենալ մեկից վոչ ավելի տեսական հասարակական աշխատանք դպրոցում կամ պիոներական կազմակերպության մեջ:

Ծանոթություն.— Ամեն տեսակ պատահական կամ կարճատև առաջադրանքները նույնպես պետք է յենթակա լինեն խիստ ռեգլամենտացիայի: Ամեն մի առանձին դեպքում դրանք թույլատրվում են և հաստատվում դպվարի կողմից:

27· Բոլոր տեսակի հասարակական աշխատանքների ընդհանուր բեռնավորումը (ամեն տեսակի հասարակական աշխատանքներ, ժողովներ, նիստեր, պիոներական հավաքույթներ) դպրոցում կամ դրսում մեկ վեցորյակի ընթացքում ամենաշատը կարող է լինել·

8—10 տար· աշակերտ (ա· բ· խումբ) 1 ժ·

11—13 տար· աշակերտ (գ· դ· խումբ) 2 ժամ·

14—17 տար· աշակերտ (բարձր խումբ) 3 ժամ:

28· Յերեխաների հասարակական բեռնավորման ռացիոնալիզացիայի համար անհրաժեշտ է՝

ա) Քաղաքական տեսակետից հասարակական աշխատանքի բազմաթիվ բնագավառներից ընտրել այնպիսիները միայն, վորոնք ու-

ուսմնադաստիարակչական արժեք ունեն և համապատասխանում են նրանց տարիքային հնարավորություններին ու շահերին:

բ) Արգելել այնպիսի բեռնավորումներ, վորոնք յերեխաների առողջության և որգանիզմի կանոնավոր զարգացման համար վնասակար են, այլ և այնպիսի աշխատանքներ, վորոնք կապված են վարակման հնարավորությունների հետ:

գ) Աշխատանքի բաշխման ժամանակ նկատի ունենալ յերեխաների տարիքը, անհատական ընդունակությունները, առողջապահական դրությունը, առաջադիմության աստիճանն ուսման գործում:

դ) Մաքսիմալ չափով կրճատել հասարակական աշխատանքի այն տեսակները, վորոնք յերեխաները կատարում են մեքենայաբար, ունեն տեխնիկական բնույթ և վորոնց կրթա-դաստիարակչական նշանակությունը չնչին է:

29. Ընդհանուր աշակերտական և պիոներական հավաքույթներն ու ժողովները կազմակերպել այնպես, վոր յերեխաները ժամանակից շուտ չհավաքվեն, ճիշտ ժամանակին սկսեն աշխատանքները, պահպանելով խիստ կարգապահություն և ժողովների այն տևողությունը, վոր տարբեր խմբերի համար նշվեց վերևում:

Ծանոթություն.— Ընդհանուր աշակերտական և պիոներական բոլոր հասարակական աշխատանքները և հավաքույթները չպետք է անմիջապես դպրոցական պարապմունքների շարունակությունը կազմեն, այլ տեղի ունենան գոնե 2 ժամվա ընդմիջումից հետո:

30. Ինչպես հասարակական աշխատանքների կազմակերպման, այնպես էլ դիսցիպլինա ստեղծելու և ուսման գործի բարձրացման աշխատանքներին դպրոցի վարչությանը մեծ աջակցություն կարող են և պարտավոր են ցույց տալ աշակերտական ինքնավարության մարմինները, ԼԿՑԵՄ և պիոներական կազմակերպությունները, լինելով աշակերտական կյանքին ավելի մոտ կանգնած:

31. Դպրոցական, սկզբնական և հասարակական աշխատանքի տևողությունը սահմանելիս պետք է նկատի ունենալ, վոր յերեխաները խաղերի, սպորտի, զվարճության և ընթերցանության համար ազատ ժամ ունենան:

32. Թեթևացնել յերեխաների ընտանեկան աշխատանքների բեռնավորումը՝ ծնողների մեջ բացատրական աշխատանքներ տանելով:

33. Հանգստի որերին արգելվում է աշակերտներին ծանրաբեռնել զանազան պարապմունքներով, հավաքույթներով և այլ պարտադիր աշխատանքներով: Հանգստի որերին աշակերտության համար պետք է կազմակերպել զբոսանքներ, խաղեր և սպորտ՝ դյուղից կամ քաղաքից դուրս:

34. Տեխնիկական աշխատավորներն անմիջապես յենթարկվում են դպրոցի վարիչի կարգադրություններին և բացառապես կատարում դպրոցին վերաբերող այն գործերը, որ մտնում են նրանց պարտականությունների մեջ:

35. Լինելով դպրոցի միանձնյա ղեկավարը և ամբողջ հիմնարկի պատասխանատուն, դպրոցի վարիչն աշխատանքի կերպով հսկում է ինչպես դպրոցի դիսցիպլինային, այնպես էլ ուսումնական հասարակական գործի կանոնավոր ընթացքին և այս կանոնների անթերի կենսագործմանը:

Լուսժողկոմ՝ Լ. ԱՐԻՍՅԱՆ

Առժողկոմ՝ Գ. ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — СССР

«Ազգային գրադարան»
NL0225527

45. 574

ԳԻՆԸ 10 Կ.